29. ԱՆՁԸ ՊՈՂՊԱՏ (ՃԱՆ ՓՈԼԱՏ)

Կեր-չկեր, թագավորմ կեր, ուներ իրեք լաճ. էն թագավորը ասաց. - Մեյ մարդ բռներ իմ, դռան ճխան դրեր իմ ականջ, չթողնեք:

Մե խել ժամանակ ընցավ, թագավոր մեռավ: էն տղեք ասին. - էրթանք էն մարդ, որ մեր խեր բռներ ա, թողնենք:

էն պստիկ լաճ ասաց. - Չէ, չըմ թողներ, մեր խեր ասաց, մը թողեք:

Մե ժամանակ վերեն ընցավ, ջոջ աղբոր իրեք աղջիկ ուներ. մեկ օր պատահան որ գել, արջ, Սմոյի խավք էկան, մեհվան էլան:

Ջոջ աղբեր ասաց. - Գե՛լ, ա՛րջ, Սմոյի խա՛վք, ընչի՞ էկաք:

Ասին. - էկաք ձեր աղջկըյտեր կուգիմ. մե խամար կը տանենք:

Ջոջ աղբեր էլավ ջոջ աղջիկ իտուր գելուն, միջնեկ աղջիկ իտուր արջուն, պստիկ աղջիկ իտուր Սմոյի խավքուն. առին տարան:

էկանք Ճանփոլատ, որ դռան ճխանի ակնջին մանջն էր դրեր խեր, անոր բաժ մեկ թիզ, անոր մրուս իրեք թիզ. գնացին, թողեցին: Մեկ էրկու օր կընցնի, Ճանփոլատ մե խատ խրեղեն ձի ունա, իրեք ոտնեն ա, պստիկ աղբոր կնիկ կը թալի վար էդ իրեք ոտնեն ձիուն, կառնի, կէրթա:

Պստիկ աղբեր իրիկուն կուգա տուն, տսնա կնիկ չկա. կասա. Ճանփոլատ իմ կնիկ առավ, գնաց:

էն էլ ուր ձին կը խեծնա, կէրթա ետև յուր կնկա: Կէրթա-կէրթա գիլու կոնախի առջև պայա կէղնի. գիլու կնիկը էլ կէլնի, հէրդսեն գլուխ կը խանա, կասա. - Այ խողածին. արջ յուր ոտնով, օձ յուր պորտով չկարնա

գա ստա, արե՛, խաց կե, մկա գել կուգա, քո ջոջ պրտուճ քո ականջ կը դնի:

Կէրթա ներս, կը տսնա օ յուր ջոջ աղբոր աղջիկն ա, մեկ մեկի իրես կը պագնին, կը խնդան վեր մեկ մեկի: Կասի աղջիկ. - Ախբեր, քեզի որ մեկ տեղ պախեմ, որ գել չգա, քե ուտա:

Աղջիկ կը տանա, տղեն կը փաթաթա, կը դնի քունջ. հըրկուն գել կուգա , կըսի. - Կնի՛կ, խողածնի խոտ կուգա:

- Այ մարդ, սարեն դո՛ւ կուգաս, ձորեն դու կուգաս. խողածնի խոտ քինե կուգա:

Գել կը նստի, էնտեղ կուտեն. կասա կնիկ. - Այ մարդ, մկա իմ աղբեր գեր, իներ սդա, դյու ի՞նչ տ'էնիս:

- Ի՞նչ տ'էնիմ, քյո աղբերքեր ինին սդա, փառռ տ'էնիմ:

Ասաց. - Վալա, իմ պստի աղբեր իկի սդա:

Պստի աղբերներն է, խորի միջեն կը խանին, կը բերեն, կասա. - Բարի ես եկի, ո՞ր տեղ տի էրթաս:

- Ճանփոլատ իմ կնիկ տարի, կո տի էրթամ էտև:

Կասա. - Գնա արջի մոտ, էն սալխ կտա քե:

Էլավ գնաց. շատ-քիչ՝ Աստված գիտի. գնաց արջի կոնախի առջև պայա էղավ, էլմ կնիկ էրդսից գլոխ էխան դյուս:

- Խողածին, արե, ծարավ իս, ջուր խմե, անոթի ես, խաց կի, մկա արջը կուգա, քո ջոջ պրտուճ քո ականջ կը դնի:

Կէրթա, կը տսնա օ ջոջ աղբոր միջնեկ աղջիկն ա. էն էլ սկուն մեկելի պես կը տանա, կը պախի:

Հիրկուն արջ կուգա, կասա. - Այ կնի՛կ, մարդախոտ կուգա:

Այ մարդ, սարեն, ձորեն դու կուգաս. մարդախոտ քեզնից կուգա:

Նստան, կերան, խման, կնիկ ասաց. - Մկա օ իմ աղբերքեր իյնին սդա, ի՞նչ տ'էնիս:

- Քյո աղբերքեր ինին սդս փառռ տ'էնիմ:

- Իմ պստի աղբեր կո ըստեղն ա:

Կը կանչեն, կը պիրեն, կասա. - Ինչի՞ ես էկի:

- Ճանփոլատ իմ կնիկ տարավ, էրթամ էտև:

Կասա. - Ամուլ խավքուն մոտ գնա, էն գիտի, քո կնիկ որտեղ տարեր ի:

Կէլնի կէրթա, շատ-քիչ, Աստված գիտի, կէրթա Ամուլ խավքուն կոնախի առջև պայա կէղնի, կնիկ էլմ կէլնի, էրդսից գլոխ դյուս կը խանա, վախ կուտա, կասա. - Արե, խաց կի, ջուր խմե, գնա. մկա Ամուլ խավք կուգա, քե գայ կանե:

Կէրթա ներս, կը տսնա ջոջ աղբոր աղջիկն ա. մեկ մեկի կը պագնին, կուրախանան վեր մեկ մեկի, էլմ կը պախի:

Հիրկուն ի, Սմուլ խավք տուն էկավ, կնկան կասա. - Կնի՛կ, մարդ մարդախոտ կուգա:

- Սարից, ձորից դյու կուգաս, մարդախոտ քեզնից կուգա:

Նստին, կուտեն, կը խմեն, կնիկ կասա. - Իմ աղբեր ըստեղ գա, դյու ի՞նչ կանես:

- Քո աղբեր ըստե գա, փառռ կանիմ:

Կնիկն է յուր աղբեր կը կանչի, կասի. - Դյու ո՞րտեղ կէրթաս:

- Ճանփոլատ իմ կնիկ տարե, էրթամ իտև:

- Ո՞ր տեղ կանաս խասնիս ինուր, ինուր ձին խրեղեն ա: էրթաս տաս տիկ գինի, տաս խոյու դմակ կառնիս, կը տանիս ծովի բերան զատկի ուրբաթ օր, էնտեղ կուռ կը փորես, գինին կը լցիս էնտեղ, ինչ վախտ ծին ծովուց դյուս կըլնի, կը ցեկնի էնտեղ, մրջեմներ դյուս կէլնին. էն դմակ կուտեն. գինին կը խմեն, դյուն էլ կէլնիս, կը թռնիս էն դյուս էնող քուռկու քամայ, էն գախ խրեղեն քուռակ կասա. «Խողածին, ի՞նչի ծիկ կը խեծնիս. ես կէլնիմ վի, կու տամ քե հառջև արեգական. կը վառիմ»: Ինչ էն գախ կը բարձրնա արևի մոտ, դյու սրջվի ձիու փորի տակ. էն գախ ձին քե կասի. «Այ տղա՛, իսորից սորա իս քո ձին, դյու իմ տերը»: էն գախ կը խարցնի. «Քո մուրազը ի՞նչ ա»: Կասիս. «Ճանփոլատ իմ կնիկ տարեր ա, խնդրեմ պիրես»:

Ինուր ասածին պես կէրթա, կառնի դմակ ու գինին, կը տանի ծովու բերան, ձին ծովուց կուգա դյուս, կը թռնի քուռկու քամայ, կը բանձրանա վեր խրեղեն քուռակ, երբ կէլնի հառջև արեգական, կէջնի ձիու փորու տակ: Քուռակ կը տսնա որ յուր վերևի մարդ զախմ ա, կասի. - Այ խողածին, մուրատդ ասա:

- Ճանփոլատին խասնիս, իմ կնիկ ինոր ձեռնեն ազատիս:

- Շատ լավ, - կասի, կը թռնի, կէրթա խրեղեն քուռակ, Ճանփոլատի տուն կէջնի. կը տսնա օր ուր կնիկ նստե, ճախրակ կը մանա, կնիկ կասա. - Այ մարդ, սիվտակ լաչով մը չկեր, որ էսքան տարին ընկեր իս իմ իտև:

- Քեզի կուզիմ, էլի խեծի խրեղեն քուռակ:

Խեծնին կը քշեն:

Հիրիկվան Ճանփոլատ կուգա տուն, կը տսնա կնիկ չկա. ձիուն կը խարցնե. - Այ ձի, խաց ուտինք, ջուր խմինք, նոր էրթա՞նք իտև կնկան, թե՞ մկա էրթանք:

Ձին կասա. - Մկա էլ էրթանք, չենք խասնի, ուտենք, խմենք էրթանք, էլ չենք խասնի, իմ աղբերն էկավ, տարավ, էն չորս ոտով ա, իս իրեք ոտնով իմ:

Ճանփոլատ ձին կը խեծնի, կը քշա, ձին կիմնա օր Ճանփոլատ ինկե ետևեն, կը պոռա. - Այ թոփալ սատանա. էդա մարդ զանիս գետին, էնիս փարչա-փարչա, թե չէ՝ կը դառնամ վերեդ ...:

Ճանփոլատին կը զանա գետին. կը վազի կէրթա ձիուն. մեկ ձին կնիկը կը խեծնի, մեկ ձին տղեն, քշեն կէրթան գիլուն կոնախ. խոշպեշ կէլնին. էնտեղ թաժա խարսնիս կանեն:

Ինոնք խասան ուրենց մուրատին ...: